№ 37 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 2 — 1896 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 2 № 37

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., ութ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արտասահմանի հայ ուսանողութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժամանակ է հասկանալ. Անդրկովկասեան երկաթուղու դրութիւնը. Գիւղատնտեսական դրամագլուխ. Մատենագրութիւն. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղական կեանքի գծեր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Նորերս „Մշակի“ մէջ տպագրած մի թղթակցութիւն, գրված Շվեյցարիայից, շատ մռայլ գոյներով էր նկարագրում ժընէվի հայ ուսանող երիտասարդութիւնը։ Դա բացառիկ կարծիք չէ։ Մեր ստացած տեղեկութիւնները, թէ թղթակցութիւնների ձևով և թէ բերանացի, առհասարակ շատ աննախանձելի և նոյն իսկ յուսահատեցնող գաղափար են տալիս եւրոպական զանազան քաղաքներում կենտրոնացած ուսանողների մասին։ Ընդհանուր կարծիքն այն է, որ մեր այժմեան ուսանող երիտասարդութիւնը արտասահմանում, լուրջ կերպով չէ նուիրված գիտութեան, չէ պարապում, հիմնովին չէ ուսումնասիրում ոչ մասնագիտութիւնը, ոչ եւրոպական կեանքը, և օգտվելով եւրոպական քաղաքների կեանքի բոլոր առաւելութիւններից, միայն մի նպատակ ունի,—որ և է դիպլոմ ստանալ և վերադառնալով հայրենիք՝ կարիէր ստեղծել, կեանք վայելել...

Եթէ ճիշդ է՝ շատ ցաւալի է։

Սակայն կարելի՞ է միթէ երևակայել երիտասարդութիւն՝ առանց իդէալների, ուսանողութիւն՝ առանց իդէալական ձգտումների, առանց հասարակական զգացումների, առանց ոգևորված յափշտակութեան՝ դէպի գիտութիւնը, դէպի եւրոպական քաղաքակրթական կեանքը, դէպի առաջադիմական շարժումները։ Ուսանողներ՝ առանց յափշտակութեան դէպի գիտութիւն, երիտասարդութիւն՝ առանց իդէալների,—դա կը նշանակէ կարիէրիստների մի խումբ, որ արժանի չէ ոչ մի համակրութեան հասարակութեան կողմից, և ոչ էլ որ և է ուշադրութեան։

Մեր հասարակութեան նման մի փոքրիկ, կուլտուրական կեանքի մէջ նոր շարժվող ժողովրդի ուսանող երիտասարդութիւնը, որը մուտք է գործում բարձրագոյն դպրոցները, որը դիմում է դէպի արտասահման, ունի մի բարոյական պարտականութիւն, որը գուցէ չունեն ոչ գերմանական, ոչ ֆրանսիական, ոչ անգլիական ուսանող երիտասարդութիւնները, որոնց ապագայ դերը իրանց հայրենի երկրի մէջ չունի այն գաղափարական գոյնը, որը ունի հայ ուսանող երիտասարդութիւնը։ Գիտութիւնից, գաղափարներից, հասարակական բարձր ձգտումներից զուրկ մի ժողովուրդ ահագին, բազմակողմանի յոյսեր է դնում իր ուսանողութեան վրա, սպասելով որ նա կեանքի մէջ մանի իբրև ղեկավարող ոյժ, իբրև մտքի մշակ, իբրև դասատիրապետող ոյժ։ Իսկ այդ պատուաւոր, մեծ դերը կատարելու համար հայ ուսանողը պէտք է ամեն վայրկեան ներշնչված լինի այդ բարձր պարտականութեան գիտակցութեամբ, և ներշնչված այդ գիտակցութեամբ՝ պէտք է իր ամեն մի բօպէն գործ դնի լուրջ կերպով պատրաստվելու, գիտական և մտաւոր լուրջ պաշար ձեռք բերելու համար...

Բայց եթէ մեր ուսանողութիւնը արտասահմանում իր միակ նպատակը կը դնի՝ ինչպէս և լինի, որ և է դիպլոմ ձեռք բերել և վերադառնալ հայրենիք իր համար կարիէր ստեղծելու, եթէ նա, այդ ուսանողութիւնը, նոյն իսկ մի տարի, տարի ու կէս, կամ շատ շատ երեք տարի մնալով արտասահմանում, իրան կը համարի գիտութեան վերջին խօսքին տեղեակ, և արժանի վայելելու հայրենի երկրի մէջ թէ հասարակութեան յարգանքը և թէ կեանքի բոլոր բարիքները,—այն ժամանակ մեզ մնում է զուժել հայ հասարակութեանը, որ իզուր են նրա մեծ-մեծ յոյսերը, որ դնում է իր ուսանող երիտասարդութեան վրա։ Նրանք վերադառնում են և կը վերադառնան հայրենիք ոչ թէ իբրև գիտութեան մշակներ և հասարակական լուրջ աշխատողներ, այլ լոկ իբրև տիտղոսաւոր կարիէրիստներ, իբրև թոյլ և գործելու անընդունակ մի տարր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿ Է ՀԱՍԿԱՆԱԼ

Վենետիկի «Բազմավէպ» ամսագրի վերջին համարը, որը մենք նոր ստացանք, առիթ է տալիս մեզ կարծելու, որ կղերականութիւնը ամեն դէպքի, ամեն ժամանակի մէջ պատրաստ է միջնադարեան կրօնական վէճեր բորբոքել, ցոյց տալու համար, թէ այս կամ այն զուտանձնական հասկացողութիւնը ուղիղ և ճշմարիտ է այս մի եկեղեցու մէջ, մինչդեռ միւս եկեղեցին, որ այլ կերպ է ըմբռնում այդ հարցը, հերձուածող է։

«Արարատի» այժմեան խմբագիրներից մէկը, Ն. Քարամեան, որ բոլորովին ձեռնհաս հեղինակութիւն է համարում իրան նոյն իսկ կրօնական խրթին հարցերի մէջ, իր մի նկատողութեամբ չփոթեցրել է Մխիթարեան հայրերին և նրանք մի կծու, անվայել ոճով դուրս են եկել ոչ թէ Քարամեանի դէմ, այլ լուսաւորչական, կամ ինչպէս Մխիթարեաններն են ասում. էջմիածնական եկեղեցու դէմ։

Մեզ ամենևին չէ հետաքրքրում այն, թէ երկու կողմերից ո՞րն է արդարը։ Գիտենք, որ Էջմիածինը մի վերածնութեան դար է երաղում հին հին կրօնական մտքեր քարոզելով, երևակայելով, թէ կարող է հայ եկեղեցին յետ դարձնել դէպի այն անհետ կորած ժամանակները, երբ ամեն ինչի սկիզբը և վերջը կղերականութիւնն էր, երբ ազգի շահեր չը կային, այլ կար միմիայն կղերականութեան շահ։ Բայց և Մխիթարեանների վարմունքը, բանակռիվ ձեր, նիւթը մեզ ցոյց է տալիս, որ կաթոլիկ հոգևորականութիւնն էլ նոյն յետադէմ դրութեան մէջ է գտնվում։

Երկար դարերի փորձը, կարծես, բաւական չէր կղերականութեան համար։ Կրօնական ատելութեամբ պառակտված, մաս մաս դառած մի ազգի տանջանքները վերջացան այն ժամանակ, երբ մարդկանց սրտերում հաստատվեց ժամանակի լոյսը. ամենքը հասկացան, որ կրօնը, իբրև համոզմունքի առարկայ, չէ կարող մի ազգի զանազան մասերը անջատել, միմեանց դէմ թշնամացնել։ Ազգը—դա կրօնական համայնք չէ, այլ մի մեծ և բարդ մարմին, որ պարտաւորութիւններ ունի աշխարհի առաջ, որ պիտի զարգանայ իբրև գոյութեան բոլոր իրաւունքներով օժտված մի կուլտուրական ամբողջութիւն։ Հնութիւնը ազգը միացնող, ազգին մի տեսակ կերպարանք տուող ոյժ համարում էր լոկ կրօնը։ Այժմ այլ ևս չեն երկրպագում այդ հասկացողութեան, այժմ իբրև ազգային միութեան հզօր գործօններ, երևան են եկել ընդհանուր համաձայնութեան, լեզուի, հայրենիքի, պատմական և տնտեսական միասնաների հասկացողութիւնները։

Ժամանակի այս արդար պահանջները բոլորովին պարզվել են մեր ազգի մեծամասնութեան—լուսաւորչական հայերի համար (մեր խօսքը, ի հարկէ, աշխարհականների մասին է)։ Ի պատիւ կաթոլիկ, բողոքական հայերի, մենք կասենք, որ նրանց մէջ էլ իրականանում են այդ գաղափարները։ Վերջին տարիների մի շարք անցքերի մէջ մեր այլազգաւան անուանված հայերը գեղեցիկ կերպով ապացուցին, որ իրանք մեզ հետ եղբայրներ են։ Մնալով տարբեր կրօնական համոզմունքների մէջ, նրանք չը քաշվեցին այն ասպարէզներից, ուր դրված էին հայութեան, իբրև մի ամբողջ ազգութեան, շահերը։

Այս յաղթանակը, որ տարաւ և շարունակ տանում է ազգայնութեան գաղափարը, պիտի հարկադրէր բոլոր հոգևորականներին, առանց դաւանութեան խտրութեան, դէն դնել իրանց կրօնական-դաւանաբանական վիճաբանութիւնները, որոնք երկար դարերի ընթացքում ոչինչ ցանկալի հետևանքի չեն հասցրել, բայց միայն սերմանել են փոխադարձ ատելութիւն, երկպառակութիւն։ Անօգուտ, մեր ժամանակին բոլորովին անյարմար վիճաբանութիւնների տեղ հոգևորականները պիտի տոգորվեին աւելի լաւ, ազատ և լայն հայեացքներով և աշխատէին սահմանափակել կրօնական հասկացողութիւնները անհատների համոզմունքի չրջանում, վերացնէին այն բոլոր խոչընդոտները, որոնք դեռ կան հասարակութեան անդարգացած խաւերում և որոնք արգելում է էլ աւելի համարձակ, էլ աւելի յամառ, յաղթական։

Կարելի է ասել, որ գիւղական ժողովրդի ընտանեկան և հասարակական կեանքի հիմքը, մինչև այժմ իշխող բազմաթիւ ընտանեկան, ընկերական, հասարակական կարգերը խախտված են և ամեն բան ինչ որ հին է, ինչ որ մինչև այժմ սովորաբար նահապետական էր կոչվում, անխընայ աւերածութեան և քայքայման է ենթարկվում. ժամանակը գործում է ճակատագրական արագութեամբ և ամենքն առանց դատելու, առանց քննելու, ընկնում են նրա գիրկը և տարվում նրա ծփանքների մէջ։

Փոխվում է գիւղացու զգեստը, նրա կնոջ արդուզարդը, փոխվում է, և այն էլ զարմանալի արագութեամբ, նրա բարքառը, նրա նիստ ու կացը, հասարակական հաւասարիքները, հին աշխարհայեացքը, արտաքին յարաբերութիւնների վերաբերեալ աւանդութեամբ սրբագործված օրէնքները, մի խօսքով այն ամենը, ինչ որ հին է, ինչ որ նրա աւանդական ժառանգութիւնն է կազմում պապերից մնացած։

Ճշմարիտ է, հինը դեռ ևս բոլորովին տեղի չէ տուել, չէ յետ քաշվել խսպառ. գիւղերում տակաւին կարելի է պատահել բազմաթիւ իրապէս հին աշխարհայեացքի տէր անձանց, նահապետական կեանքով ապրող գիւղացիներին. դեռ ևս խսպառ չեն վերացվել (գուցէ դեռ չուտով էլ չեն վերանայ) մեծ փափախները, երկար փէչերով արխալուղները, հաստ բարաթը (գօտի). գիւղի փողոցներում դեռ հազւագիւտ երևոյթ չէ պատահել 50—60 տարեկան պառաւների, որոնք աղամարդ տեսնելիս ծածկում են իրանց բերանները ու երեսը, ոտաբոբիկ աղջիկներ, որոնք մարդ տեսնելիս ծածկվում են այծեամների պէս, հարսներ, որոնք քօղով ծածկված ունեն երեսները և անշուշտ ենթարկված են բարբարոս սկզբունքների անլուր ճնշումներին. բայց և դրա հետ միասին դուք կը տեսնէք գիւղերում և թանգագին կտորից «պալտօով» և «բրեզինէ կալոշներով» չրջող գիւղացիներ, նոր ձևով (վրացիական) գլուխ կապած կանայք, «զօնտիկով» և «սապոգներով» չրջող աղջիկներ։

Այսպիսով գիւղական կեանքը իրանից ներկայացնում է այժմ մի ժիսոր, ուր ոչինչ որոշ չէ, և ոչ մի բան տեղական չէ։ Ինչպէս արտաքինն է փոխվում, նոյնպէս և ներքինն է անողորմ փոփոխութեան ենթարկվում։ Նորը դեռ բոլորովին չէ յաղթանակել, բայց նա արդէն այնքան դրաւումներ է արել, որ արժէ առանձին ուշադրութեան առարկայ դարձնել այդ։ Շատերը նորի այս յաղթանակների մէջ անպայման վերածնութիւն, առաջադիմութիւն են տեսնում. ոմանք բոլորովին վնասակար են գտնում այդ բոլորը և սուգ ու ողբ են բարձրացնում մինչև անգամ մամուլի միջոցով։ Այսպէս թէ այնպէս, գիւղական կեանքի անցողական չրջանը բազմաթիւ հետաքրքրութեան արժանի երևոյթներ է ներկայացնում և մենք կաշխատենք կարելի չափով այդ կեանքի ճիշդ պատկերը գծագրել։

Գիւղի հասարակական կազմակերպութեան արտաքինը փոխված չէ. անծանօթ մարդը դժուարութեամբ կը կարողանայ փոփոխութիւններ նկատել։ Առաջվայ պէս գիւղացիք խմբվում են գիւղամիջում, որը գիւղերում ծառայում է որպէս դատաստան, խօսելու, ժամանակ անցնելու տեղ. այստեղ խօսում են իրանց առօրեայ գործերից, հասարակական ժողովներ են գումարում, վճիռներ են կայացնում, աղմուկ, ճիչ, կռիւ, քրքիջ, սրախօսութիւններ։ Առաջվայ պէս ոէսը ճօճում է իր դալար ճիպօտը, գլիրը վազում է փողոցներով իր անախորժ կանչով, առաջվայ պէս գիւղացին դողում է «մենձաւորից», սողում է նրա ոտների տակ, սսկում է եասաւուլի մարակի հարուածների առաջ մարթեան առարկայ դարձնել այդ։ Շատերը նորի այս յաղթանակների մէջ անպայման վերածնութիւն, առաջադիմութիւն են տեսնում. ոմանք բոլորովին վնասակար են գտնում այդ բոլորը և սուգ ու ողբ են բարձրացնում մինչև անգամ մամուլի միջոցով։ Այսպէս թէ այնպէս, գիւղական կեանքի անցողական չրջանը բազմաթիւ հետաքրքրութեան արժանի երևոյթներ է ներկայացնում և մենք կաշխատենք կարելի չափով այդ կեանքի ճիշդ պատկերը գծագրել։

Գիւղի հասարակական կազմակերպութեան արտաքինը փոխված չէ. անծանօթ մարդը դժուարութեամբ կը կարողանայ փոփոխութիւններ նկատել։ Առաջվայ պէս գիւղացիք խմբվում են գիւղամիջում, որը գիւղերում ծառայում է որպէս դատաստան, խօսելու, ժամանակ անցնելու տեղ. այստեղ խօսում են իրանց առօրեայ գործերից, հասարակական ժողովներ են գումարում, վճիռներ են կայացնում, աղմուկ, ճիչ, կռիւ, քրքիջ, սրախօսութիւններ։ Առաջվայ պէս ոէսը ճօճում է իր դալար ճիպօտը, գլիրը վազում է փողոցներով իր անախորժ կանչով, առաջվայ պէս գիւղացին դողում է «մենձաւորից», սողում է նրա ոտների տակ, սսկում է եասաւուլի մարակի հարուածների առաջ մար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ

I

Նահապետական կեանք, պարզ գիւղական կեանք, միամիտ գիւղացիներ,—ահա բառեր, որոնք մինչև այժմ անխտիր գործ են ածվել գիւղացիների համար. սակայն այժմ, ըստ երևոյթին, հասել է ժամանակը, երբ այդ «նահապետական», «պարզ», «միամիտ» բառերը պէտք է գործածվեն ամենայն զգուշութեամբ։

Մեր գիւղական կեանքը ներկայումս գտնվում է իր այն ֆազիսներից մէկում, որոնք առանձնապէս հետաքրքրական են լինում, որովհետև ներկայանում են որպէս ապագայ մի նոր ժամանակաշրջանի ուղղութիւն տուող, այն ֆազիսներից մէկում, որոնց սովորական է անցողական չրջան կոչել. նոր կեանքի երկունքի ժամանակամիջոցն է այս չրջանը։ Նորի և հնի, իբրև հաւասար ոյժերի, մօտիկ անցեալի կատաղի մաքառումը, արդէն կարծէք թէ տեղի է տուել առաջնի յաղթութեան. հինը թուլանում է ժամ առ ժամ և դրա հետ միասին նորը համեմատաբար

լում և դժուարացնում են համարիւն, համացեղ, բայց կրօնով տարբեր մարդկանց համերաշխ և միաբան գործակցութիւնը՝ յանուն ընդհանուրի բարօրութեան և շահերի:

Ժամանակ է, վերջապէս, հասկանալ, որ միջնադարեան կրօնական կատաղութիւնը անդառնալի կերպով թաղված է:

Մենք այս պահանջը ուղղում ենք աւելի կաթոլիկ և բողոքական հայերի հոգևորականութեան: Լուսաւորչական հոգևորականութիւնը այլ ևս մտքի, քարոզչութեան միակ արտօնատէր չէ. մամուլ, դրականութիւն, հասարակական գործունէութիւն այլ ևս նրա ձեռքում չեն: Իսկ կաթոլիկ և բողոքական հայերի մէջ, դժբաղդաբար, միայն հոգևորական դասին է պատկանում ամբողջ ասպարէզը: Ուրեմն և նրա վրա է ծանրանում մեծ պարտականութիւն՝ կրթել համայնքը մեր դարի լուսաւոր գաղափարներով, ժողովրդականացնել ոչ թէ կրօնական անհանդուրժողական նեղսրտութիւնը, որ միմիայն մոլորեցնել, խառնել, մթնացնել կարող է, այլ այնպիսի սկզբունքներ, որոնք հաստատում և անխորտակելի են դարձնում եղբայրութեան անգին խորհուրդը:

Լ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Անդրկովկասեան երկաթուղու Թիֆլիսից Բաթում և Փոթի տանող գծերը նորից ենթարկվեցին աւերմունքների: Դեռ երկու շաբաթ առաջ, Մալիթա կայարանի մօտ, սարը փուլ գալով ապրանքակիր գնացքի վրա, ամբողջ գնացքը խորտակեց.—երկու շոգեկառքերը ընկան գետի մէջ, գնացքը դուրս շպրտվեց գծից և ջարդ ու փշուր եղաւ, մեքենավարը անհետացաւ սարից թափվող կոյտերի տակ, 22 կօնդուկտօրներից մի քանիսին տարաւ ջրի հոսանքը, մի քանիսը հազիւ կարողացան դուրս գալ ջրից, շատերն էլ վիրաւորվեցին:

Նորերս էլ պատահել են սարսափելի աւերմունքներ, որոնց մասին ահա թէ ինչ են հեռագրում «Իվէրիա» լրագրին:—Մարէլիսի կայարանից փոքր ինչ հեռու ամբողջ սարը փլվում է 150 վերստ տարածութեան վրա: Թէև ամեն հնար գործ են դնում, որպէս զի երկաթուղու գիծը ազատեն վտանգից, բայց փլվող սարը սպառնում է ամբողջապէս փուլ գալ և այն ժամանակ երկաթուղու երթևեկութիւնը կարող է դադարել մէկ ու կէս կամ երկու ամիս: Այս տեղեկութիւնը ինժեներ Ակօրօնկօ հաղորդելով՝ աւելացնում է, որ երկիւղ կայ և այն պատճառով, որ սարից թափվող կոյտերը Զխէրիմուլա գետի առաջը բռնել են և միայն մի փոքրիկ տեղ է մնացել ջրի հոսելու համար, այնպէս որ ջուրը կարող է ընթացքը փոխել և ամբողջ գիծը ողողել:

Բէլօգօրի և Զիրուլի կայարանների մէջտեղ գիծը փչացած է տասն և մէկ վերստ տարածութեան վրա: Զխէրիմուլա գետը այնպէս յորդացել է, որ սպառնում է ամեն ինչ ոչնչացնել: 136-րդ վերստի վրա գտնվող կամուրջը մեծ վտանգի մէջ է գտնվում: Ճանապարհորդները գիշերում են Խաշուրա կայարանում, առաւօտեան գնում են մինչև Բէլօգօրի, իսկ այնտեղից ճանապարհորդները ոտով գնում են տասն և մէկ վերստ տարածութիւն: 136-րդ վերստի վրա գտնվող կամուրջը ճանապարհորդները ոտով են անցնում և մի գնացքից փոխվում են միւս գնացքը: Մեծ երկիւղ է տիրում այս ու այնտեղ թափվող քարակոյտերի պատճառով:

Նովո-Սենակից մինչև Փոթի երկաթուղու գիծը ամբողջապէս ջրի տակ է գտնվում: Բիօն գետը դուրս է եկել ափերից: Գնացքների երթևեկութիւնը դադարած է:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

Աղնուական կալուածական բանկը սրանից տարի ու կէս առաջ դիմել էր Ֆինանսների մինիստրին՝ խնդրելով մի քանի փոփոխութիւններ մտցնել բանկի կանոնադրութեան մէջ: Մինիստրը ծանօթանալով բանկի գործունէութեան հետ՝ թոյլ է տուել մտցնել կանոնադրութեան մէջ հետևեալ կէտերը. 1) թոյլատրել փոխառութիւն տալ բացի այն տեղերից, որոնք յիշված են կանոնադրութեան մէջ, նաև Բաթումի և Արդուինի շրջաններում. և 2) փոխառութեան ժամանակամիջոցը փոքրացնել՝ նշանակելով նոյն իսկ 9 տարի և 10 ամիս:

Մինիստրի թղթի մի նշանաւոր կէտը, որ հասարակական նշանակութիւն է ստանում, կայանում է նրանում, որ նա յատկացնում է բանկի եկամուտի 5 տոկոսը գիւղատնտեսական դրամագլուխ կազմակերպելուն, որ պէտք է գործադրվի կրեդիտային հիմնարկութիւններ բանալու համար գաւառներում, գիւղատնտեսական զպրոցներ հիմնելու, երկրագործական մեքենաների և գործիքների պահեստներ և արհեստանոցներ շինելու և ուրիշ այդտեսակ ձեռնարկութիւնների համար:

Այդպիսով մի կանոնաւոր և խիստ օրինական ձև է ստանում բանկի միջոցների մի մասի գործադրութիւնը հասարակական, կրթական և արդիւնագործական պէտքերի համար: Բանկի եկամուտի 5% կազմում է աւելի քան 20 հազար ռուբլի տարեկան, որ կարող է ժամանակով, երբ բանկի գործունէութիւնը լայնանայ, աւելի ևս մեծանալ: Այդ գումարով կարելի է լուրջ ձեռնարկութիւններ սկսել և զգալի կերպով օգնել տեղական արդիւնագործութեան զարգացման:

Բանկի այս տարվայ ժողովը պէտք է կազմակերպի մի յատուկ մարմին, որ զբաղվելու է այդ դրամագլխի գործադրութեան խնդրով: Աղնուական կալուածական բանկի այս գեղեցիկ օրինակից պէտք է օգտվեն մեր միւս բանկերը և իրանց եկամուտի մի մասը յատկացնեն հասարակական կարիքներին: Այդ միտքը շատ անգամ է յայտնվել, բայց մեր բանկերը իրագործելու ցանկութիւն չեն ցոյց տալի ամենևին:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Кавказъ, географическій, этнографическій, историческій и экономическій очерки Г. Москвича, Одесса, 1896.

Կովկաս, աշխարհագրական, ազգագրական, պատմական և տնտեսական ակնարկ. Գ. Մոսկվիչի Օդէսա. 1896.

Գ. Մոսկվիչ, որ անցեալ տարի հրատարակեց Օդէսայում մի քանի գործնական ուղեցոյցներ Կովկասի և Ղրիմի մասին, փորձել է այժմ մի համառօտ, բայց ամփոփ և հանրամատչելի գրուածք տալ Կովկասի մասին: Ամբողջ աշխատութիւնը ամփոփված է 204 in octavo էջի մէջ և այդ փոքր գրքի մէջ հեղինակը աշխատել է նկարագրել Կովկասի աշխարհագրական դիրքը, սարերը, լճերը, գետերը, բոյսերը, կենդանիները, հանքերը, հողի կազմուածքը, կլիման, ազգագրական և վարչական կազմակերպութիւնը, գլխաւոր տարրերի—հայերի և վրացիների պատմութիւնը, երկրի այժմեան տնտեսական վիճակը և ռուսաց նուաճումները:

Տարակոյս չը կայ, որ կամենալով մի այդպիսի լայն և լուրջ ծրագիր իրագործել մի փոքր գրքոյկի մէջ, հեղինակը պէտք է չօշափէր խնդիրները չատ հարևանցի կերպով և տար ընթերցող հասարակութեան միայն մի գործնական և համառօտ ուղեցոյց կամ ձեռնարկ Կովկասի մասին: Այդպէս էլ արել է նա և պէտք է ասել, նրա այդ փորձը անաջող չէ դուրս եկել:

Զուսենալով գիտական որ և է արժէք, Մոսկվիչի աշխատութիւնը այնու ամենայնիւ միջոց և հնարաւորութիւն է տալիս ամեն մի ցանկացողին մի համառօտ գաղափար կազմել Կովկասի անցեալ և ներկայ պատմութեան ու վիճակի մասին: Խօսելով Կովկասի ազգութիւնների մասին, նա այդ ազգերի նկարագրութեան հետ միասին առաջ է բերում և նրանց համառօտ պատմութիւնը, աւելի երկար կանգ առնելով հայերի և վրացիների վրա այն պատճառով, որ «կովկասեան բազմաթիւ ցեղերի մէջ միայն երկուսը—հայերը և վրացիները պատմութիւն և յիշատակարաններ ունեն, որոնք լոյս են սփռում այդ երկու ազգերի անցեալ պատմութեան վրա: Հայերի և վրացիների ազդեցութիւնը ամբողջ Անդրկովկասի հին կեանքի ընթացքի վրա չատ սատիկ է եղել»:

Իր եզրակացութեան մէջ խօսելով այն արդիւնքների մասին, որոնց ռուսական կուլտուրան կարողացել է ձեռք բերել վերջին 30 տարվայ ընթացքում, Կովկասի վերջնական նուաճումից յետոյ, հեղինակը հետևեալն է ասում. «Ռուսաց լեզուն, սովորութիւնները և բարքերը չատ աչքի ընկնող ֆակտօրներ են կազմում տեղացիների կեանքի մէջ: Կովկասի մայրաքաղաքում, Թիֆլիսում, որ 140 հազար բնակիչ ունի, մօտ 20 հազար ռուս կայ և ամեն մի ռուս այդ քաղաքում, չը նայելով օտար ցեղերի տիրապետութեան, իրան աւելի է զգում իր տանը, Ռուսաստանում, քան թէ, օրինակ, պալօնական Վարշավայում կամ Ռիգայում: Առհասարակ տեղացիների մէջ հետզհետէ արմատանում է այն գիտակցութիւնը, թէ Կովկասը կազմում է մեծ Ռուսաստանի անբաժանելի և անխզելի մասը և թէ երկրի բարօրութիւնը ու ապագայ բարգաւաճումը ամբողջովին կախված է տեղական ազգաբնակութեան ռուս ազգի հետ մօտենալուց: Միայն Անդրկովկասի ամենահարաւային և հարաւ-արևելեան մասերում ռուս տարրը, ռուսաց լեզուն հազիւ նկատելի է: Ի վերջոյ պէտք է ասել, որ Ռուսաստանը, ընդունելով Կովկասը իր հզօր հովանաւորութեան տակ, յանձն է առել չափից դուրս մի դժուար պաշտօն—այդ բնական բերքերով հարուստ երկիրը հանել իր ամայի, անիշխան և անշարժ վիճակից և մղել դէպի քաղաքակրթութիւն»:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարտի 26-ին

Բագուն Պետրովսկ քաղաքի հետ երկաթուղային գծով միացնելու խնդիրը, ըստ երևոյթին, պէտք է չատ չուտով դրական լուծում ստանայ: Այժմ համոզվել են կառավարչական շրջաններում, որ այդ գծի անցկացնելը ունի կարևորութիւն մի քանի տեսակէտներից:

Այդ գծի հակառակորդները պնդում էին, որ ոչ մի կարիք չը կայ Բագուն կապել Պետրովսկի հետ, քանի որ ծովային հաղորդակցութիւնը թոյլ է տալիս թէ մարդ և թէ ապրանք տեղափոխել մի քաղաքից միւսը: Սակայն գծի կարևորութիւնը պաշտպանողները ապացուցանում են, որ նախ այդ հաղորդակցութիւնը ամենևին չէ կարող հաւասարվել այն երթևեկութեանը, որ լինում է երկաթուղու միջոցով. երկրորդ՝ Բագուի և Պետրովսկի մէջ ընկած տարածութիւնը, լինելով չատ բարեբեր և հարուստ մի երկիր, կարօտ է հաղորդակցութեան ճանապարհների:

Արդարև Բագուի, Ղուբայի և Դերբենդի գաւառները, չը նայելով որ գտնվում են ծովափից ոչ հեռու, կարծես կտրված են աշխարհից, կղզիացած են: Բագուի գաւառի այն մասում, որ ընկած է այդ ճանապարհի վրա, երևացել են նաւթային հանքերի նշաններ, իսկ Ղուբայի գաւառը ունի մի արգաւանդ հող և առատ ջրաբաշխութիւն: Բացի այդ՝ Դաղստանի մի նշանաւոր մասը մօտենում է կանոնաւոր ճանապարհներին:

Թէ որչափ անհրաժեշտ է չը յետաձգել Բագու—Պետրովսկի գծի շինելը՝ այդ լուսաբանվեց այս ձմեռ և մի ուրիշ կողմից: Այն սաստիկ անձրևներ և ձիւները, որ եկան այս տարի Քութայիսի և մասամբ Թիֆլիսի նահանգում, ընդհատեցին կանոնաւոր հաղորդակցութիւնը մի քանի ամսով: Իսկ այդպիսի մի մեծ ընդհատում ներկայ ժամանակներում աննեղելի պէտք է համարել թէ տնտեսական և թէ ընդհանուր պետական տեսակէտներից:

Դեռ յայտնի չէ, թէ երբ և ինչպէս կարելի կը լինի անցկացնել երկաթուղու գիծը կովկասեան լեռնաշղթայով. դա չատ վճռվող խնդիրներից չէ: Իսկ Կասպեան ծովափով երկաթուղի դիզել դեռ ևս ծեծվում են անասունների պէս: Գիւղի գործերը շարունակում են կառավարել իշխաններն իրանց «սաքուններում» նստած, իսկ սաքուն, գիւղական աշխարհայեացքի այդ «դարբնոցը», շարունակում է ապրել իր բոլոր փառաւորութիւնով: Զմերային երեք ամիսների կատաղի պարապութիւնը դեռ ևս շարունակվում է, իսկ ամարային սոսկալի աշխատանքները նոյնն են, արհեստները դեռ բացակայում են և մեր գիւղացին շարունակում է տակաւին մնալ միմիայն երկրագործ և խաչնարած:

Գիւղական խղճուկ եկեղեցու զանգակները առաւօտ և երեկոյ զօղանջում են և քահանան տընքալով, թթված երեսով գնում է եկեղեցի, գրցում է վրան պատառոտած վիլոնը և ժամասացութիւնը կատարում մեն մենակ: Նրան հետևում են և՛ չարաւաւոր կանայք և մեծ փափխաւոր ծերունիներ և այլն և այլն: Այսպէս, ըստ երևոյթին, նախկին գիւղը և՛ այժմ ապրում է. նա կարծէք թէ ոչ մի փոփոխութեան ենթարկված չէ, ոչ մի քայլ չէ արել առաջ, այլ սառած, արձանացած կանգնած է իր նախկին տեղում, այնպէս, ինչպէս որ կար 100 տարի առաջ, պարզ, նահապետական...

Բայց մի փոքր հետաքրքրութիւն, մի փոքր ուշադիր և խորաթնին հայեացք և ահա պատկերը փոխվում է. յայտնվում է, որ այս բոլորը միմիայն արտաքին է (այն էլ ոչ անփոփոխ) և գիւղի ներքինը ահագին փոփոխութիւններ է կրել:

Առաջին և անհամակրելի գիծը, որ գիւղական կեանքի մէջ այժմ իսկոյն աչքի է ընկնում, դա գիւղացիների հոգեկան աշխարհի այլանդակութիւնն է. պարզ, միամիտ գիւղացին այժմ կամաց-կամաց դառնում է խորամանկ, կասկածամիտ և տրամադիր դէպի խաբեբայութիւն:

Ով ապրել է գիւղերում, նա անչուշտ առանձին ցաւով նկատած կը լինի, որ մեր գիւղական ժողովրդի բարոյական մակերևոյթը տարուց տարի աւելի և աւելի ցածանում է: Գիւղացին աւելի և աւելի անսիրտ է դառնում դէպի մերձաւորը, դէպի թոյլը, անզօրը: Օր օրի վրա ծանրացող հացի խնդիրը, որպէս հետևանք հողային կրիզիսի, համակել է մարդկանց էութիւնը. գիւղացին աւելի ժլատ է դարձել, նա հեշտութեամբ յանձն է առնում զանազան գիւղական ագէրաներ, փոխադարձ հաւատը թուլացել է, ամեն բանում սկսում է իշխել նաղդ փողը և ճարպիկութիւնը: Նահապետական բարքերի անկումը տանում է, ոչնչացնում է իր հետ և գիւղացու քաղաքացիական զգացմունքի յետին մնացորդները. դժուար է այժմ համակրութիւն տածել դէպի այդպիսի գիւղացին. նա հինը կորցնելու վրա է, իսկ նորը նրան ոչ ոք չէ տալիս: Այս վիճակը ողբալի է և հարկաւոր է նրան դարման անել:

Մեր կարծիքով, ինչպէս որ և է ցաւ բժշկելու համար նախ և առաջ նրան հիմնաւորապէս ուսումնասիրել պէտք է, այնպէս էլ գիւղական կեանքի այս ցաւը բժշկելու համար անհրաժեշտ է նախ և առաջ նրա պատճառներն ուսումնասիրել: Ոմանք դրա պատճառները փնտռում են իրանց կոչման բարձրութեան վրա կանգնած քահանաների բացակայութեան մէջ. ուրիշները գտնում են, թէ պատճառը տգիտութիւնն է. կան անձինք էլ, որ այս դրութիւնը համարում են մի անխուսափելի, անհրաժեշտ հանգամանք, որ միշտ զուգակից է եղել անցողական շրջաններին, որպիսի շրջանի մէջ գտնվում է ներկայումս մեր գիւղական կեանքը. և վերջապէս գիւղական բարքերի անկումը չատերը համարում են արդիւնք ապրուստի սաստիկ դժուարութեան, հացի խնդրի, հողային կրիզիսի...

Մենք հեռու ենք վերոյիշեալ պատճառների խոշոր ազդեցութիւնը հերքելու մտքից. չենք ուրանում, որ սրանք ահագին դեր են խաղացել գիւղական կեանքի այս ցաւալի վիճակը ստեղծելու համար, և ճշմարիտ, ինչպէս ուրանալ տգէտ, չահասէր, ծոյլ և չատ անգամ ընկած բարքի տէր քահանայի բացասական ազդեցութիւնը մեր գիւղացիների բարոյականի վրա. ինչպէս հերքել այն ճշմարտութիւնը, թէ հացի խնդիրը չատ անգամ մարդկանց անսիրտ է դարձնում, որ սեփական ստամոքսի հոգսը, սեփական կաշու ամբողջ պահելու զգացմունքը խլացնում է մարդկանց մէջ խղճի ձայնը, մեռցնում է մերձաւորի ցաւն զգալու զգացմունքը և մարդկանց հաւասարեցնում է իրար յօշոտող սոված գազաններին: Այո, այս բոլորը ճշմարիտ են, մենք չենք համարձակվում հերքել, բայց և պնդում ենք, որ եթէ վերոյիշեալ բոլոր պատճառները վերացվեն, եթէ գիւղում կարգենք մի հրեշտակաբարոյ և կրթված քահանայ, եթէ վերացնենք հացի խնդրի դժուարութիւնները և մարդիկ հեշտութեամբ կարողանան հաց վաստակել, այնու ամենայնիւ ժամանակից ցաւալի վիճակը, գիւղական բարքերի անկումը բոլորովին չի վերանայ, այլ միայն կը մեղմանայ: Պատճառը: Պատճառը այն է, որ կան մի քանի այլ ֆակտօրներ, որոնք իրանց խոշոր ազդեցութեամբ կարող են եթէ ոչ ոչնչացնել, զէթ զգալի կերպով թուլացնել գիւղական կեանքի բարոյականութեան օժանդակիչ պայմանները:

Այդ մասին յաջորդ անգամ:

Ա. Ահարոնեանց

Հ. Ա. ՊԱՐՈՒՅՐ

ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՌԱՍՊԵԼՈՒԹԻՒՆԸ

Ա

Ամենայն ինչ, որ գրեցինք մինչև այսօր Արշակ Երկրորդի մասին, ինքնին հասկանալի է, թէ ինչպէս ամենայն ինչ, որ գրուած է Հայոց Մեծ

Կ. Պոլսից մեզ գրում են. «Հայ կաթոլիկներու պատրիարքը Աղարեան վերջերս բաւական փոխած է ընթացքը։ Հիմակ կառավարութիւնը կը տիպէ Աղարեան պատրիարքը, որ պաշտօնապէս հերքէ եւրոպական լրագիրներուն մէջ հրատարակուած տեղեկութիւնները։ Ցենք յուսար սակայն, որ ճնշումները արդիւնք մը ունենան. Աղարեան պիտի չուզէ երբէք այս ամօթը բերել իր անուան վրա։ Հրաժարումէ ալ վախ չունի. իբր Պատրիարք-կաթողիկոս Իզմիրլեանէն աւելի զօրաւոր դիրք մը ունի, որովհետեւ ընտրութիւնը մինչև ցմահ է և կարդինալներու ժողովը միայն կրնայ գահընկէց ընել զինքը»։

—

Անգլիական ամսագրեր և հանդէսները չարունակում են լուրջ յօդուածներ նուիրել հայերին և Թիւրքերին։ «Chantauquan» հանդէսի փետրվարի համարում Դէ Պրեսենզ գտեղել է մի յօդուած «Թիւրքերը Հայաստանում» վերնագրով. «Fortnightly Review» հանդէսի մարտի համարում դոկտոր Էմիլ Դիլօն գրել է յօդուած «Ֆիասկո Հայաստանում» վերնագրով, «Windsor Magazine» հանդէսի փետրվարի համարում Սիւթքլիֆ տպել է յօդուած «Թիւրքը գործի մէջ» վերնագրով։

—

Վանից մեզ գրում են մարտի 6-ից. «Ցունվարի վերջերը այստեղ եկան երկու բարձրատիճան պաշտօնեաներ՝ ըստ ամենայնի մէմուրիներ, կարգ և ապահովութիւն հաստատելու համար։ Մինչև այժմ ալ հոս են. մինչև այժմ ալ յայտնի չեղաւ թէ ինչ ըրած են, կամ ինչ պիտի ընեն»։

—

Կ. Պոլսից «Voss. Zeit.» լրագրին հաղորդում են. «Ռուսաստանը հրաժարվեց, իբր թէ, ստանալ պատերազմական տուգանքի մնացորդը, որ հասնում է 3,700,000 թիւրքայ լիրայի, և դրա փոխարէն իրաւունք է տրվում նրա պատերազմական նաւերին՝ առանց արգելքի անցնել նեղուցներով։ Այդ լուրը կասկածելի է երևում նրա համար, որ այդ հարցը միմիայն Թիւրքիան չէ կարող լուծել»։

—

Բէյտէրի գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից մարտի 30-ից. «Եւանգուն բանակցութիւններ են տեղի ունենում վերջերս հանգանակած նպաստաղրամները Անատոլիայում բաժանելու մասին, որովհետև տեղական իշխանութիւնները, մանաւանդ Բիթլիսում, արգելում են միսիոնարներին գործադրել հանգանակված գումարները։ Մուշի բրիտանական փոխ-հիւպատոս Համպսոնին հրահանգ է ուղարկվել՝ Բիթլիս գնալ և հսկել գումարների բաշխման վրա»։

—

Կ. Պոլսից հեռագրում են անգլիական լրագիրներին ապրիլի 1-ից (ն. տ.). «Բիթլիսի ամէրիկական միսիոնարները հեռագրել են, որ տեղական իշխանութիւնները արգելեցին նրանց իրանց տներից դուրս գալ։ Յաջորդ հեռագրով, որ ստացվեց նոյն օրը, նրանք հաղորդում են, որ իրանց հրաման է տրվել թողնել երկիրը և հարաւային ճանապարհով գնալ Ալէքսանդրէտ։

«Երէկ առաւօտեան, Ամէրիկայի դեսպանի պաշտօնակատար Միստր Բիդլը տոկունութեամբ սկսեց գործել և այդ գործում նա զօրաւոր օգնական գտաւ սբր Ֆիլիպ Կէրրիին, որ խիստ կերպով բողոքեց։ Միստր Բիդլը մինչև այնքան տեղ առաջ գնաց, որ պաշտօնապէս յայտնեց, որ եթէ տրված հրամանները յետ չառնվեն, դիպլոմատիական յարաբերութիւնները Թիւրքիայի և Ամէրիկայի մէջ կընդհատվեն։ Նրա ջանքերը, սբր Ֆիլիպ Կէրրիի աջակցութեամբ, աջողութեամբ պակվեցին։ Բ. Դուռը յօժարեց զիջում անել և խոստացաւ հրաման ուղարկել, որ միսիոնարները չարունակեն անխափան իրանց գործը և նրանց թոյլ տրվի մնալ երկրում»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, մարտի 26-ին

Զատկի երկուշաբթի օրը պատրիարքը ընդունեց չնորհաւորական այցելութիւններ. շատ աչխարհական և եկեղեցական ներկայ էին։ Ազգային ժողովին ատենապետ Նորատունկեան Գաբրիել էֆէնդին, որ «աղնուաշուք» մէն է, ներկայ չէր։ Այս մարդը որ վառքի համար ատենապետ եղած է, գէթ տարին մէկ անգամ չուզէր իր պարտականութիւնը կատարել։

Ճառը խօսեցաւ ազգային ժողովին առաջին ատենապետ Յարութիւն Մոստիչեան. այժմեան դրութիւնը նկարագրեց, պատրիարքին հաստատամտութիւնը և գործունէութիւնը գովեց։

Հարկաւ իմացաք որ Պուլկարիոյ իշխանը չընդունեց հայոց, հայ-կաթոլիկներուն և հայ-բողոքականներուն ներկայացուցիչները։

Կը յուսացուի որ «Հայրենիք»-ը սկսի հրատարակուիլ յառաջիկայ հինգշաբթի կամ շաբաթ օրը. դժուարութիւնները բաւական հարթուեր են։

Պ—ի

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Մարտի 29-ին Զմերային պալատում բաղդ ունէին ներկայանալ Թագաւոր Կայսրին բրիտանական նոր նշանակված դեսպան Օգնոր դեսպանութեան անդամների հետ միասին։ Ունկնդրութեանը Օգնոր յանձնեց Թագաւորին իր հաւատարմագրերը։

ՓՕԹԻ, 30 մարտի։ Մարտի 27-ին, գիշերը, ջրի աւելանալը դադարեց։ Ամսի 28-ին ջուրը սկսեց պակասել։ Համարեա քաղաքի կէսում հաղորդակցութիւնը կատարվում է նաւակներով։ Ցերկօվնայա և մնացած փողոցներում կառքերով կարելի է շրջել։

ՊԱՐԻԶ, 30 մարտի։ Կարծում են, որ գերմանական կանցլերի սկսած ճանապարհորդութիւնը կապ ունի գերմանական քաղաքականութեան հնարաւոր յեղափոխութեան հետ եգիպտական հարցում։ Ասում են, որ Գերմանիան համոզվելով, որ Դօնգօլայի վրա արշաւանքը Իտալիային ոչ մի օգուտ չի տայ, դիտաւորութիւն ունի Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ համաձայնութիւն կայացնել, ինչպէս որ նա համաձայնութիւն կայացրեց նոյն պետութիւնների հետ եւսօնա-չինական ընդհարումը կարգադրելու համար։ Ցայտնի չէ, թէ արդեօք Հօհէնլօէ եղել է Բուրժուայի մօտ, բայց կարծում են, որ նա կողմնակի կերպով հարցուփորձ է արել Բուրժուային կոմս Միւնստերի միջոցով։

Կ. ՊՕԼԻՍ, 30 մարտի։ Մարտի 28-ին իշխանը ներկայ էր հանդիսաւոր նախաճաշին, որ տուեց գերմանական դեսպանը։ Իշխանի ճանապարհ ընկնելը յետաձգված է մինչև երեքշաբթի։ Սուլթանը արաբական երկու ձիեր ընծայեց իշխանին։ Իր մեկնելուց առաջ իշխանը հանդիսաւոր ճաշ է տալիս։

ԼՕՆԴՕՆ, 30 մարտի։ «Daily News» լրագրին հաղորդում են, որ Ալէքսանդրիայում նորից խօլերա երևաց։

ՍՈՒԱԿԻՄ, 30 մարտի։ Մարտի 28-ին Օսման Դիգմա յարձակում գործեց Էրկօվեսի մօտ անգլիացիներին բարեկամ արաբների վրա, բայց յետ մղվեց։

ՓՕԹԻ, 30 մարտի։ Ջուրը կապարչ գետում 8 դիւյմ պակասեց։ Քաղաք կիսով չափ ազատվեց ջրից։

ՊԱՐԻԶ, 31 մարտի։ Մարտի 31-ին վախճանվեց Տրիկուպիս։

ՊՕՏՍԴԱՄ, 31 մարտի։ Մարտի 31-ին վախճանվեց Շրադէր։

ԴԱՐՄՇՏԱՏ, 31 մարտի։ Մեծ դուքսը իր ամուսնու հետ մայիսի 4-ին ճանապարհ են ընկնում Բերլինի վրայով դէպի Մոսկվա՝ սրբազան թագադրութեանը ներկայ լինելու համար։

ՎԻԷՆՆԱ, 31 մարտի։ Յէտինիէից ստացված տեղեկութիւններից երևում է, որ չէրնօգօրիական իշխանը մայիսի 4-ին Վիէննայի և Պետերբուրգի վրայով ճանապարհ է ընկնում Մոսկվա՝ թագադրական հանդիսին ներկայ լինելու համար։

ՀՌՕՄ, 31 մարտի։ Մասսօվայից հաղորդում են, որ Մոխրամի մօտ գնդապետ Ստեֆանիի կուրը դերվիշների հետ վերջացաւ իտալացիների կատարեալ յաղթութեամբ։ Դերվիշները ցրվեցին և նրանց օգնութեան հասած զօրքերն ևս փախուստ տուին։ Դերվիշների կորուստը մեծ է։ Իտալացիներից միայն 100 հոգի սպանվեցին։

ՎԵՆԵՑԻԱ, 31 մարտի։ Մարտի 30-ին հասաւ «Հօհէնցօլէրն» նաւը գերմանական կայսերական զոյգով։ «Հօհէնցօլէրն» նաւը գնացին իսկոյն՝ թագաւորը, թագուհին, Նէապոլիտանեան պրինցը և Բերլինի իտալական դեսպանը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 29-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	30 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	46 »	— »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	35 »
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպօններ — . .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	6—7½%	
4% պետական բէնտա	98¼ »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	286 »	— »
— — երկրորդ —	253½ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	217 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	100⅜ »	— »
4% ներքին փոխառութեան . . .	98 »	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100⅛ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	— »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	101⅛ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկերութեան մնաց.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101¼ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101¼ »	— »
Օդեսայի — —	101 »	— »
Թիֆլիսի — —	98¼ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	101 »	— »
5% — — — . .	99½ »	— »
Ռոստայիսի — 6% . .	101 »	— »
5% — — — . .	99½ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Ցնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ԶԷԹ, սմբակները պնդացնելու, կակղացնելու և սնացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։ ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.։

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամէն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսնումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չիբուխների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։ ԳԻՆԸ՝ 75 կօպ.։

ԹԱՄԲԱՑԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար)։ Դորձ է ածվում մեծ աջողութեամբ ամէն տեսակ սպիտակ և գունաւոր գոյների կաշի մաքրելու։ ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.։

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու։
(№ 22) 5—50

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ.

Թարգմանվում է և մայիսին լոյս կը տեսնի Ս. ԶԵՆԶԵՆԿՈԻ „ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ“ դասագրքի հին դարերի առաջին մասը (Արևելք և Յունաստան)։
2—3 Տ. Յովհաննիսեան

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Ցնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՑԾԱԿ»։ Մի քանի բօպէում նորոգում է հին, անչնորհ, խաղխաղած կահկարասիքը, պիանինօ, բոյալներ, հայելիի և ուրիշ չրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը։ ԳԻՆԸ՝ 1 ր.։

ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից (մոզօլներ), եղունգներից և կաշուէ այլ ուռոյցքներից։ «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, եղունգները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում։ ԳԻՆԸ՝ 60 կ.։

Ծախվում է դեղարարական խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների Կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու։
(№ 22) 5—50

Զգուշացրէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպկինները, սեւութիւնը, դեղին բծերը, պուզիկները և պտուկները և ներդործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի Կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Դրիմլակի, պ.պ. Պոպօվների և Արիստակովի մօտ։
(№ 7) (ա. 1 և 15) 9—24

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
Ցանկանում է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ունենալ Թիֆլիսում։ Կարող է սովորեցնել Հայոց լեզու, Ֆրանսերէն, նոյնպէս և Թւաբանութիւն։ Ցանկացողները, պայմանները իմանալու համար, պէտք է դիմեն առաւօտեան 10—12 ժամը, Հեռաւեալ Հայցէովի Բեթղեհեմի փողոց, № 2, տուն Մինասեանի։
(№ 32) 4—8

Հանդուցեալ գեներալ-մայորի այրի Նունէ Եւանգուլեանի կտակակատարները յայտնում են, որ նրանք նշանակել են

ՎԱՃԱՌԵԼՈՒ
ԿՏԱԿՈՂԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

1) ԵՐԿՈՒ ՏՈՒՆ, պարտիզով և գետնով, մօտաւորապէս 600 քառակուսի սաժէն, որոնք գտնվում են Թիֆլիսի 9-րդ ոստիկանական բաժնում, Ելիսավետեան փողոցի վրա, № 106։

2) ՄԻ ԽԱՆՈՒԹ, սենեակով, նկուղով և գետնով, 9 քառակուսի սաժէն, 5-րդ ոստիկանական բաժնում, ճօների կարգում (շապոչնիկ լեռդ)։

Վաճառման պայմանների մասին կարելի է տեղեկութիւններ ստանալ Շատաս-կապիտանի այրի տիկին Կատարինէ Միրիմանեանից (Սօլօլակ, Ստարօ-Ինստիտուտսկայա փողոց, սեպհական տուն)։
(№ 37) (ե. շ.) 1—3

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
(Վելիամինովսկայա փողոց, տուն № 3.)

ԲԱՑԷ { Առաւօտեան ժամ 9—2, երեկոյեան 5—10
Կիրակի և տօն օրերը առաւօտեան 10—2

Տուն տանելու համար տրվում են գրքեր և պարբերական հրատարակութիւններ։ Վճարը՝ ամսական 20 կոպէկ և 10 կոպէկ։ Ընթերցարանի մուտքը 2 կոպէկ. 30 տոմսի աբօնիմենտ—40 կ.։

Ստացվում են՝ հայերէն 1) «Մշակ», 2) «Արձագանք», 3) «Նոր-Դար», 4) «Տարազ», 5) «Աղբիւր», 6) «Մուրճ», 7) «Արևելք», 8) «Շաւիղ», 9) «Արարատ», 10) ժողովածուներ։

Ռուսերէն. 1) «Кавказъ», 2) «Новое Обозрѣніе», 3) «Тифлисскій Листокъ», 4) «Русскія Вѣдомости», 5) «Новости», 6) «Новое Время», 7) «Биржевыя Вѣдомости», 8) «Каспій», 9) «Иверія», (վրացերէն), 10) «Русское Богатство», 11) «Русская Мысль», 12) «Новое Слово», 13) «Вѣстникъ Европы», 14) «Сѣверный Вѣстникъ», 15) «Міръ Божій», 16) «Недѣля».
(№ 31) 4—10

„ՄՇԱԿԻ“ ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

	Գինը
1) ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կօպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 «
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 «
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի.	20 «

Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։
(№ 59) 5—10

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Апрѣля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.